բայրներս սաստիկ զբաղուած են լինում իրենց դաշտային գործերով, մտել էին մեր այգին մի քանի թուրքեր, կերել էին հասած ամեն տեսակ պտուղներից, վերցրել էին իրանց ճանապարհին ուտելու համար անագին պաշար և ապա պարարտ գառան յետևի ոտքը կտրել, խորոված արել, կերել էին և յետոյ հանդարտ խղճով հեռացել էին՝ թողնելով խեղճ գառան արիւնաթաթախ և սոսկալի տանջանքների մէջ, որի սարսափելի ցընցումներն ու աղիողորմ աղաղակները՝ կոշտ ու կոպիտ թուրքերի քարացած սրտերին և վայրենի հոգուն մեծ ուրախութիւն և խնդութիւն է պատճառած եղել, ինչպէս յետոյ ականատես երեխաները պատմեցին ինձ։

Թուրքիայի տխրահռչակ ենիչէրիներից և անխիղճ բաշիբուզուկներից և կիսավայրենի չերքէզներից ու անգութ քիւրդերից ոչինչով պակաս չեն Ուտիացոց երկրի Հայ մահմեդականները իրենց անսահման մոլեռանդութեամբ և անզուսպ բարբարոսութեամբ։ Խաղաղ, չափազանց աշխատասէր և երկրագործութեան սիրահար ժողովրդի ամբողջ տարուայ թափած դառն քրտնքի արդար վաստակը, մէկ էլ կտեսնէք, որ միքանի ժամուան մէջ հող ու մոխիր է դառնում, որով ամբողջ երկիրը քայքայւում է տնտեսապէս և ընկնում դժբախտ վիճակի մէջ։ Վերջին 25—30 տարուան ընթացքում, համարձակ կարելի է ասել, որ հէնց միմիայն Զոռլու և Միրզաբէկլու իրար կից 100 տնից բաղկացած գիւղերում, խոտի, հացահատիկների հարիւրաւոր և հազարաւոր դէզեր,